

2625

2626

2627

2628

2629


2630

2631

84

B-85

1153



2011

ՆԱՐ ՇԱՐԻ ԶԱՐԴԱՐԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՔԻՆՆԵՐՈՒ ԹԻՒ 9

891.99

“ՊԱՇՏՈՆՍ ԽՌՄԲԱԼ Է.”

ԿԱՅԱԿ ՎԵՐԳՈՎԵՐԵՆ

Մ է Կ Ա Բ Ա Բ

Վ Ե Բ Հ Ա Ի Ա Ֆ Ե Ց

Ք. Փ Պ Տ Ա Խ Ե Ւ



“GILIGIA” BOOK STORE
57 La Belle Ave., H. P.
DETROIT, MICH.

Վ. Պ Ա Լ Ի Ս

ՏՊԱԿԱԾ. Յ. Ա.Ա.ՏԱՐԵՎՈՒՆ. ԱՐԴԻՐ

1920

“ՊԱՇՏՈՆՍ ԽՐՄԲԱԼ Է..”

ՏԵՍԻԼ Ա.

Ժ Կ Խ Լ

Ժիշլ.—Ո՞հ, այս ի՞նչ երջանկութիւն է: Հինգ տարիէ ի վեր չեմ տեսել Մառկովթը, և ահա այս երեկոյ նամակ մը տացայ իրմէ: Տեսէք թէ ինչ է զբել իմ պաշտելին: (Կը կարդայ) «Սիրելի Ժիշլ, Այս երեկոյ ժամը 10ին եղիք Օպէրայում, և ինձ սպասիր թիւ և օթեակում: «Մարկովթ» Դեռ ժամը 9ին է: Երեւակայեցէք թէ մէկ ժամէն պիտի տեսնեմ իմ սիրելին, Բայց ինչպէս գուրս ելլելու է հոսկէ: Իմ կինը յետոյ գալիս է և նայում թէ մի գուցէ թռած լինիմ իմ վանդակէն: Բայց անհրաժեշտ է երթալ, անպատճառ գնալու եմ: Պէտք է մի միջոց խորհիլ: (Կը խորհի), կվրէկա՛, գտա՛յ: Այս, շատ լաւ միջոց է: Հիմա կը գտնեմ մի աններկելի յանցանք, մի պատրուակ և կը գժուուիմ իմ կնոջ հետ, այնպէս որ մէկ մ'ալ չի համարձակուիր գալ իմ սենեակը: Փորձենք: (Աւրշկելով անկողինը կ'ախի պոռայ): Ինչ խայտառակութիւն է այս, ժամը 9ին է և տակաւին իմ անկողինը չէ շիտկած, սա տո՞ւն է թէ դժոխք: Ոչ, ոչ, կարեւի չէ համբերել, պէտք է աւելի խիստ լինիլ:

ՏԵՍԻԼ Բ.


ՆՈՅՆ, ՔԵՐԾ ԵՒ ԿԱՍԹՈՆ

Քիշն.—(Մտնելով) Ի՞նչ է պատահեր սիրելիս, ի՞նչ ես դարձեաւ բորբոքել:

Ժիշլ.—(Բարկութեամբ) Սա է պատահել որ միշտ նոյն անկարգութիւնը տիրել է այս տան մէջ: Ուր է գնացել կասթօն, այս ժամուս դեռ անկողինը չէ շիտկած: Ուզում

ԱՆԶԻՆՔ

- | | |
|--------|------------|
| ԺԻՒԼ | ՀԱՐԺԻՐԱՎԻՑ |
| ՔԵՐԾ | ԿԻՆՔ |
| ԼԻՆԴՈՐ | ԶԻՆՈՒՐ |
| ԿԱՍԹՕՆ | ԾԱՌԱՅ |



399

40

Պ

Եմ մի քիչ հանգստանալ և ահա թէ ի՞նչ վիճակի մէջ եմ
գտնում իմ անկողինը :

Կասթոն .—Պարսոն , դեռ մի քիչ առաջ ես շխտկեցի ձեր
անկողինը:

Քյուն. — Այսուհետեւ առ ալ ներկայ էի երբ նա շիտկեց:

Ժիւլ. — (Մեկուսի) Վայ չար սատանայ : Աւրիշ փորձելու է : Հաւ, լաւ, մի անգամ էլ շտկիր : Ես լաւ եմ զգում որ դուք համաձայնուել էք որ ինձ բարկացնեք, դուք ուզում էք զիս սպաննել : Տեսէք, տեսէք, հոս թոլոր զրքերս խառնել են, ով է իրաւունք ստացել խառնել իմ զրքերը : Զգիտեմ ո՞վ է այս տունի տէրը, ե՞ս թէ դուք : (Կասրօն մեկնի)

Քիոն. — Հանդարտէ սիրելի Ժիւլս, դու ինչ որ պատճառ ևս վնասում բարկանալու : Այս վայրկեանիս դու ինք խառնեցիր գրքերը : Քենէ զատ ոչ ոք ձեռք չէ զպցուցել քու գոյքերուն :

Ժիշ. — Էռեցէք, դուք այլեւս չափը անցնում էք, դուք ուղում էք զիս խեղղել, ես գեռ չեմ գտուել, տեսէք, երկու ժամ է որ ուղում եմ մի սիկառ ծխել և լուցկի չեմ գտնում: Ասոր ալ մի արդարացուցիչ տօկումնատ զաէք տեսնեմ: Օ՞ն:

Քղեն. — Բայց սիրելի Ժիւլս, ձշմարիս որ շատ տարօրինակ էք դառնում: Տեսէք ահա ևս եմ գրել իմ ձեռքավերկու տուփ լուցին այս սեղանի վրա:

Ժիշ. — Սրանք դատարկ են: Կը բանայ եւ կը բափե) (Անկուսի) Վայ չար սատանայ, այս ալ չի յաջողեցաւ: Բայց պէտք է մի կերպ պրծիլ այս տեղից: (Բարձր) Ո՞չ ոչ, ես երբէք չզիտի կարողանամ երջանիկ լինիլ: Դուք ամէնքդ աշխատում էք զիս գժբազդացնել, կորէ՛ք, դուքս զնացէ՛ք, շօ՛ւտ: Ես լու եմ հասկանում, այն օրից որ այն պարոնը սկսեց թղթակցի քեց հետ, իմ կեանքոյ ոժուառատու:

Ժիշ. — Տեսէք, տեսէք, պատճակ կղզան:

տանը : Կորսուի՛ր , և մէկ մ'ալ ոտքդ մի կոխեր ի՞մ սեհ-
եակը : Անչնորհք :

Քլեն.— Լաւ ես գնում եմ, բայց դու ա'լ չի համար-
ձակուես իմ սենեակը գալ, հասկանո՞ւմ ես:

Ժիւլ. — Ոչ, ոչ, անհոգ եղիք

Քյու. — Դարձեալ կրկնում եմ, հասկանում եմ, ըստ համարձակութեա դալ իմ ննջասենեակը: (Կը Անկինի)

Ժիշտ.— Ուղքերը ջախջախուի ով որ գայ: Վերջապէս
յաջողեցայ: Խեզծ Քլէո, որքան սաստիկ բարկացաւ: Այլեւս
վախր անհնատացաւ, մէկ էլ չի գար իմ սենեակը, որով ևս
ալ կարող կը լինիմ այցելութեան երթալ իմ սիրելի Մար-
կոփթին, Երթամ մի քիչ զարդարուիմ: (Զախ կողմեկն կ'ան-
նիսի:) (Դուռը կը զարնուի) Մտէ՛ք: (Կրկին) Մտէ՛ք: (Դար-
ձեալ) Մտէ՛ք:

SEPTEMBER.

ՀԱՅԻ ԲԵԼԻՆԴՈՅ

Ահլինր :— (Սահեղով բարեւ կեցած) Կապիտա՞ն :

dkuz — (ukruhli) *uq t wñ*

Եհն. — Ես եմ կապիտան։ Ի՞նդոքը։

Ժիշ. — (Ալրուկի) Դնուն ես Լինդոր:

Եին .— Այս՝ կապիտան, ես եմ Լինդորը :

Ժիշ. — Հաւ, առա տեսնեմ, ինչո՞ւ եկար:

Եին .— Ես եկայ կապիտան

Ճիշ. — Ոյն, դուն եկար

Եին. — Բայց ո՞չ կապիտան, ես չեկայ:

Ժիշ. — Խնչպէս թէ դուն չեկար, տխմար

Եհա .— Այսինքն կապիտան ես իմ կամքովու չեկայ :

ԺԻՌ.— Հապա՞

Եհն .— Գնդապետը կապիտան :

Ժիւլ. — Ե՛ ի՞նչ է եղել գնդապետը:
 Լին. — Գնդապետը զիս ուղարկեց կապիտան:
 Ժիւլ. — Ո՞ւր է ուղարկել, պիտի ասե՞ս թէ ոչ:
 Լին. — Կ'ասեմ, կ'ասեմ, կապիտան, բայց մի աճապարէք որ չի մոռանամ: Գնդապետը զիս ուղարկեց: Ո՞ւր:
 Զեզ մօտ: Այս' կապիտան գնդապետը զիս ուղարկեց ձեզ մօտ այս նամակը յանձնելու:
 Ժիւլ. — Ինչո՞ւ չես տար երկու ժամէ նամակը անմի՛տ:
 Լին. — Կամաց կամաց կապիտան:
 Ժիւլ. — Ուրիշ ի՞նչ կայ Լինդոր զօրանոցում:
 Լին. — Սոանձին ոչինչ կապիտան:
 Ժիւլ. — Զինուորները բոլորն ալ զօրանոցո՞ւմ են:
 Լին. — Ոչ կապիտան:
 Ժիւլ. — Հասկա ասա տեսնեմ ո՞վ է մնացել դուրսը այս ժամուս:
 Լին. — Մի բարկանաք կապիտան, ես իմ կամքով չէ որ մնացել եմ գուրսը, գնդապետն է ուղարկել:
 Ժիւլ. — Այդ գիտեմ տիսմար: Քենէ զատ բոլորն ալ զօրանոցո՞ւմ են:
 Լին. — Այս' կապիտան, բոլորն ալ, բացի Բուռլօնից:
 Ժիւլ. — Ասա տեսնեմ, ուր է գնացել Բուռլօնը:
 Լին. — Բուռլօնը կապիտան, այնքան շատ, այնքան շատ էր հարբել որ թաւալում էր խոզի նման կապիտան:
 Խոկ տասնապետը նրան բանտարկեց կապիտան:
 Ժիւլ. — Շատ լաւ է արել: Խոկ զու Լինդոր, զու չե՞ս խմում:
 Լին. — Ես կապիտան ես խմում եմ կապիտան, բայց միայն ջուր եմ խմում կապիտան:
 Ժիւլ. — (Մեկուսի) Իրաւ որ շատ զուարծալի մարդ է, և ի՞նչ տիսմար:
 Լին. — Այս կապիտան:
 Ժիւլ. — Բայց ժամանակը անցնում է և պէտք է երթալ: Ո՛հ, ինչ լաւ գաղափար մը յլացայ: Ո՛հ, հիանալի: Արի սրւոր իմ գիշերնոցս և գտակս հագցնեմ թող պառկի իմ անկողնում: Տիկինն ալ եթէ գայ, պիտի կարծէ թէ քնացել եմ, և պիտի մեկնի: Ճիշդ ալ յարմար է աւանակը:

— 7 —

Լին. — Լաւ, ես գնա՞մ կապիտան:
 Ժիւլ. — Սպասի՛ր Լինդոր: Մօտ եկու տեսնեմ:
 Լին. — Հրամայեցէք կապիտան:
 Ժիւլ. — Սամ տեսնեմ Լինդոր, դու կարո՞ղ ես խռմբացընել:
 Լին. — Խռմբացնել: Ինչպէս թէ խռմբացնել կապիտան:
 Ժիւլ. — Հասկա պարզապէս խռմբացնել:
 Լին. — Լաւ, առենք թէ խռմբացրի, յետոյ:
 Ժիւլ. — Խռմբացրու տեսնեմ:
 Լին. — Ո՛չ կապիտան, չեմ կարող ձեր ներկայութեանը խռմբացնել: Ամօթ է:
 Ժիւլ. — Բայց փոյթ չէ, ես քեզ հրամայում եմ խռմբացրու:
 Լին. — Կապիտան, եթէ ուզում էք երթամ Բուռլօնը ուղարկեմ: Նա երբ հարբած է լինում, ճիշդ որ խոզի նման է խռմբացնում:
 Ժիւլ. — Ինձ Բուռլօնը չէ հարկաւոր, դու խռմբացրու ապա թէ ոչ քեզ կը բանտարկեմ: Հասկանո՞ւմ ես:
 Լին. — Ոչ, ոչ կապիտան կը խռմբացնեմ:
 Ժիւլ. — Ուրեմն սկսիր:
 Լին. — Իս, իս, իս:
 Ժիւլ. — Ո՛հ, ո՛հ, հիանալի, հիանալի: Լաւ հիմա գնապառկիր:
 Լին. — Գլխուս վրայ կապիտան: (Դեպի դպւոք կ'երրայ)
 Ժիւլ. — Ո՞ւր ես գնում Լինդոր:
 Լին. — Զօրանոց կապիտան:
 Ժիւլ. — Ի՞նչ ընելու:
 Լին. — Պառկելու կապիտան: Կապիտանը հրամայեց որ գնամ պառկիմ կապիտան:
 Ժիւլ. — Բայց ո՛չ, ապուշ, պէտք է հոս պառկես:
 Լին. — Այդ ի՞նչպէս կապիտան:
 Ժիւլ. — Այս, պէտք է հոս պառկես, իմ անկողնում:
 Լին. — Ո՛չ, ո՛չ, կապիտան, մի պնդէք, ես չեմ կարող անել այդ բանը: Երբէ՛ք:
 Ժիւլ. — Չէ՞ որ ես հրամայում եմ քեզ Լինդոր:

Լին.— Ոչ, ոչ, կապիտան, զուցէ մի ուրիշ զինուոր համարձակուի, բայց ես չեմ կարող ձեզ հետ մէկ վերմակի տակ պառկել:

Ժիւշ.— Բայց ո՛չ, ախմար, 'ես չպիտի պառկիմ, միայն դու պիտի պառկիս իմ անկողնում և խոմբացնես:

Լին.— Իսկ դուք կապիտան:

Ժիւշ.— Ես գնում եմ զօրանոց: Գնդապետը ինձ է կանչել:

Լին.— Այս ժամուս կապիտան:

Ժիւշ.— Այս:

Լին.— Գնդապետը քնած է կապիտան:

Ժիւշ.— Այդ քեզ չէ հարկաւոր, կատարիր ինչ որ քեզ հրամայում եմ: Շուտ հոնուիր, ասա թէ ոչ քեզ կը բանտարկեմ:

Լին.— Կամենաք բանտարկեցէք կապիտան, կամենաք կախաղան հանեցէք: Ես չեմ աներ այդ: Անվայել է մի զինուորի իւր կապիտանի ներկայութեանը հանուել:

Ժիւշ.— Լաւ մի հանուիր, միայն դատակս գլուխող գիր և պառկէ: Բայց լաւ մտիկ ըրէ ինչ որ պիտի ըսեմ: Վերմակը քաշիր գլխուղ և խոմբացրու:

Լին.— Կապիտան, քնեմ այնպէս խոմբացնեմ թէ արթուն խոմբացնեմ:

Ժիւշ.— Ապուշ, ինչպէս ուզում ես այնպէս խոմբացրու միայն թէ խոմբացրու հասկացա՞ր լինդոր:

Լին.— Այս, կապիտան, միայն թէ խոմբացնեմ: (Կը պառկի եւ կը խուլիայ)

Ժիւշ.— Դեռ հիմա չէ, երբ ես մեկնիմ: Երբոր ծառան կամ ուրիշ մէկը ներս մտնէ, բնաւ չես խօսիր և կը խոմբացնես հասկացա՞ր:

Լին.— Այս, կապիտան: Իսկ եթէ տիկինը դայ կապիտան, դարձեալ խոմբացնեմ:

Ժիւշ.— Բայց հարկաւ: Մասնաւորաբար եթէ տիկինը դայ պէտք է խոմբացնես: Եւ վայ քեզի եթէ բառ մը փախցնես բերնէդ, քեզ կ'սպաննեմ:

Լին.— Հասկացայ կապիտան, հասկացայ, զիս կ'սպաննէք: Ահա կը խոմբամ, խը՛ռ, խը՛ռ...

Ժիւշ.— (Մեկուսի) Լաւ պիտի կատարի իւր դերը այս ապուշը: Ես երթամ, յամանակն է արդէն և Մարկոփթիթ ինձ է սպասում Օպերայում: (Մեկնի)

Լին.— Սյա ինչ փորձանքն ընկայ Տէր Աստուած, եթէ յանկարծ քունս տանի և չի խոմբացնեմ, կապիտանը զիս սպաննել կուտայ: Ով Սուրբ Բեռնարդոս, դուն զիս մի քնացներ: Բայց կարծեմ մէկն է գալիս, խոմբացնեմ, խը՛ռ, խը՛ռ...

ՏԵՍԻԼ ՊԵ

ՆՈՅՆ ԵՒ ԿԱՍԹՈՂ

Կաս.— (Մտեղով ձեռին սրուակ եւ բաժակ): — Տէր իմ, ահա լիմօնատղ և բաժակը: Հոս կը դնեմ: (Մեկուսի) Կ'եւ, ըեւեւ քներ է, խեղճը այնքան բարկացաւ որ քունը տարել է: (Բարձր) Ես կը մեկնիմ պարսն, եթէ բանի մը պէտք ունենաք, զանգը սեղանին վրայ է: (Մեկնի)

Լին.— (Եղինելով) Ի՞նչ, լիմօնադ, այդ ի՞նչ հրաշալի բան, արգեօք մէկ մը խմեմ կ'ըսէք: Բայց ոչ, ոչ, ինչուս պէտք: Այս, ինչքան ալ ծարաւ եմ: Հոգս, ինչ կ'ուզէ թող լինի, ես պիտի խմեմ, թող քանի մը վայրէկեանի համար ալ ես կապիտան լինեմ: (Կը խմէ) Ծխ, սիրաս հովացաւ: Եկ մէկ էլ խմեմ: (Կը խմէ): Այս ալ վերջը: Ճիշդ որ աւանակ պատերազմին դաշտը, կրակի առջեւ դուն դնա, իսկ այս տեսակ հրաշալի հեղուկները կապիտանները խմեն: Բայց կարծեմ ձայն կայ, խը՛ռ, խը՛ռ...

ՏԵՍԻԼ ԵԸ

ՆՈՅՆ ԵՒ ՔԼԵՌ

Քիւռ.— (Մտեղով մրացով) — Կ'երեւեւ քներ է, իմ խեղճ ժիւլս, որքա՞ն բարի է: Ժիւլ, սիրելի ժիւլ, արի հաշտուենք, ես չեմ կարող քեզ պէս ամուսնի հետ երկար գժտուած մնալ: (Կը համբուրե) Աղաչում եմ, արի՛, հաշտուենք: Պարագ տեղը քնած մի ձեւացնել, Ժիւլ, չես կարող զիս խարեւ: Զարթիք,

զարթի՛ր : Զե՞ս զարթնում հա՛ , վեր կա՛ց , ապա թէ ոչ
անկողինը կ'այրեմ :

Իին .— (Սարահած վեր ցատկելով) .— Աստուծոյ սիրոյն ,
մի այրեր տիկին , կը վեր կենամ : Խո , խո , խո :

Քին .— Ո՞հ , Աստուծած իմ օդնութիւն , այս ո՞վ է :
Գող կայ , գող :

Իին .— Ոչ տիկին , ես դող չեմ , խո , խո , խո :

Քին .— Բայց ո՞վ ես դուն , ինչո՞ւ եկար հոս , ասա՛ ,
խոսէ :

Իին .— Զեմ կարող խօսել տիկին , արդիլուած է , խո , խո :

Քին .— Դուրս ասկէ ապիրատ , դուրս շուտ :

Իին .— Սպասիր տիկին , խո , խո : Անկարելի է տիկին ,
խո , խո :

Քին .— Դուրս շուտով դուրս , ապա թէ ոչ կը պոռամ :

Իին .— Մի պոռար տիկին կ'երթամ , բայց թէ ո՞ւրտե-
ղեց , դուռը դոց է :

Քին .— Աձապարէ , դուրս թոփիր ապա թէ ոչ քեզ կը
սպաննեմ : (Գրքեր եւայլն վրան կը նետէ)

Իին .— Դուրս թոփիմ , դուրս թոփիմ , բայց ո՞ւսկից թոփիմ ,
թէ որ մէջքս կոտրեմ :

Քին .— Պատուհանից , դուրս :

Իին .— Բայց թէ ո՞ւր դուրս կզամ այս պատուհանից :

Քին .— Փողոցը :

Իին .— Խոկ այն տեղի՞ց :

Քին .— Զահաննամը :

Իին .— Մտիկ ըրէ տիկին : Ես հոս պառկած էի և ի
կարգին խռմբացնում : Եթէ ուեէ բան պատահի պատաս-
խանատուն դուք էք :

Քին .— Դուրս եմ առում , դուրս , ապա թէ ոչ . . .

Իին .— Դնում եմ , զնում եմ տիկին : (Կ'երթայ դիսի
պատուհանը , վայրկեան մը կ'անենանայ : Դրսէն շունի հա-
ցաներ , դարձեալ կ'երթիկ) : Տիկին այն երկու գաղանները կը
թողո՞ւն որ երթամ , զիս պիտի բղիտեն : Ոչ , ոչ , ինչ ու-
զում ես առա , ես ինձ արուած հրամանը պիտի գործադրեմ :
Ես պէտք է պառկիմ և խռմբացնեմ խո , խո : (Կը պատիկ)

Քին .— Այս ի՞նչ փորձանք է Տէր Աստուծած , անշնորհք
ամուսինս տեսէք թէ ինչպիսի մէկը թողեր է իւր տեղ :
Բայց ո՞վ ես դուն , ինչո՞ւ եկար հոս , ո՞ւրկէ եկար : Ի՞նչ
կը նշանակէ այս : Ո՞հ , հիմա կը հասկնամ : Դուն այն պա-
րոնն ես , որ երկար ատենէ ի վեր կ'ուղէ զիս մոլորեցնել :
Բայց պէտք է զիտանաք որ անամօթ պարոն , ձեր գործած
արարքը ոճիրէ մը աւելի ծանր է , և ես ձեզ պիտի խայ-
տառակեմ հրապարակաւ :

Իին .— Անամօթ , պարո՞ն , ե՞ս : Ծիտակը չեմ հասկա-
նում : Խո , խո :

Քին .— Բայց ո՞վ ես դուն եթէ պարոնը չես : Ի՞նչ ես
անում այստեղ :

Իին .— Զէք տեսներ խռմբացնում եմ : Խո , խո :

Քին .— Ինչո՞ւ , ո՞վ է հրամայել քեզ :

Իին .— Տիկին խռմբեմ , մի բարկանաք , ես չեմ կարող
խօսել , վերջը կը գնդակահարէ զիս :

Քին .— Ո՞վ , ինչո՞ւ համար :

Իին .— Արգիլուած է ասում եմ տիկին : Կապիտանը
արգիլեց , ասաց որ զիս սպաննել կուտայ եթէ չի խռմբամ :
Բայց չեմ կարող ասել , չեմ կարող : Խո , խո :

Քին .— Ուրեմն ժիւլը պատուիրեց քեզ խռմբացնել հա՞ :

Իին .— Այս տիկին : Կապիտանը ասաց որ հոս պառկիմ ,
և ով որ գայ չգայ խռմբացնեմ , և եթէ տիկինը գայ , աւելի
խռմբացնեմ : Բայց մի ասէք իրեն , վերջը զիս կ'սպաննի :
Խո , խո :

Քին .— Այդպէ՞ս ըստւ : Խոկ ինքը ուր գնաց գիտե՞ս :

Իին .— Ասաց որ զօրանոց էր գնում , բայց կարծեմ
առա է :

Քին .— Բայց դու ո՞ւրկէ եկար , և ո՞վ ես :

Իին .— Ե՞ս տիկին , ես ես եմ :

Քին .— (Մեկուախ) Իրաւ որ տիմար է : (Բարձր) Դու
ո՞վ ես , անունդ ի՞նչ է :

Իին .— Ե՞ս տիկին , ես լինդորն եմ :

Քին .— Լինդորը ո՞վ է :

Իին .— Լինդորը կրդ գունդի զինուորն է :

Քիռ. — Դու զինուո՞ր ես : Այս ինչ անհասկա ալի առեղծուած է Տէր Աստուած : Հապա ժիւլը ո՞ւր է գնացել այս ատեն : (Սեղանին վրայ համակր նշմարելով կ'առնե եւ կը կարդայ) . «Սիրելի ժիւլս, Այս երեկոյ ժամը 10ին եղիք Օպերայում, և ինձ սպասիր թիւ 4 օթեակում» : «Մարկոփթ» : Ո՛հ, դաւաճան, հիմա կը հասկանամ նիւթած դաւդ : Ո՛հ, Աստուած իմ, գէշ եմ զդում ինձ,

Լին . — Մի՛ զախենաք տիկին, ես հոս եմ : Առ մի քիչ լիմօնադ խմբիր կը լաւանաս : Զե՞ս ուզում, աւելի լաւ, ես կը խմեմ : Քո կենացդ տիկին : Լաւացա՞ր տիկին, լիմօնադ խմեցի :

Քիռ. — Օպերայում, Մարկոփթ, որքա՞ն դժբաղդ եմ : Լին . — Մի տիրիք տիկին կ'անցնի :

Քիռ. — Լաւ, Լինդոր, պատմիր, մի ո և է բան պատմիր : Ո՛հ, կը խեղդուիմ :

Լին . — Մի խեղդուիք տիկին, կը պատմեմ, կը պատմեմ, բայց ի՞նչ պատմեմ :

Քիռ. — Պատմի՛ր, պատմի՛ր, ի՞նչ կայ զօրանոցում :

Լին . — Առանձին ոչի՞նչ տիկին : Հա՛, լաւ միտքս ընկաւ : Զօրանոցում կայ մի զինուոր Բուռլօն անուամբ :

Քիռ. — Լաւ, պատմիր Բուռլօնի մասին :

Լին . — Պատմեմ տիկին պատմեմ : Բուռլօնը միշտ հարբած է լինում, և տասնապետը նրան բանտարկեց տիկին :

Քիռ. — Օպերայո՞ւմ, Մարկոփթ :

Լին . — Կարծես թէ տիկինը փախցրեց :

Քիռ. — Լինդո՛ր, դու զիտե՞ս երդել :

Լին . — Ի՞նչպէս չէ տիկին, թէ՛ կ'երգեմ և թէ կը պարեմ :

Քիռ. — Լաւ երդիր ու պարիր տեսնեմ :

Լին . — Հատ լաւ տիկին : (Կ'երգի եւ կը պարի)

Քիռ. — Ո՛հ, ի՞նչ լաւ կ'երգես և կը պարես Լինդոր :

Լին . — Հաւանեցի՞ր տիկին, լաւ պարեցի՞ :

Քիռ. — Այո՛, շատ լաւ, շատ լաւ :

Լին . — (Մեկուահ) Կեցցե՞ս Լինդոր, կեցցես : Մարդ ոչ ուարի, ոչ խմի, այսպիսի տիկինով քով երդի և պարի : (Բարձր)

Ք Բայց Տէր Աստուած, ի՞նչպէս մոոցայ : Ինձ հրամայուած էր չի խոսիլ և միայն խոմբացնել : (Անկողին կը մտնի եւ կը խոկայ)

Քիռ. — Ի՞նչ եղաւ քեզ նորէն Լինդոր :

Լին . — Թողէք տիկին Աստուածոյ սիրոյն թողէք, պէտք է որ խոմբացնեմ :

Քիռ. — Ոտնաձայներ կան : Կարծեմ ժիւլն է գալիս : Քաշումի իմ սենեակը, և իրեն լաւ դառ մը տամ : (Կ'երգայ) :

ՏԵՍԻԼ ԶՅ

ՆՈՅՆ ԵՒ ԺԻՆԻ, ՏԵՏՈՅ ՔԱՅԱ

Ժիւլ . — (Մտնելով) . — Աւա՛զ, որքան յուսախաբ եղայ : Արքան փոխուել է Մարկառիթը : Բնաւ չէ յիշեցնում նախոկին օրերը : Արքան անմտութիւն արի պատասխանելով իւր հրաւերին : Մեզք : (Եշմարելով Լինդորը որ կը խոկայ) : Այս աւանակր դեռ կը խոմբացնէ : Տար Աստուած որ կինս եկած չը լինէր : Արթնցնենք սա ախմարը :

Քիռ . — (Ներս մտնելով) Դեռ չե՞ս քնել ժիւլ :

Ժիւլ . — Ո՛չ, ի՞նչ ես եկել հոս :

Քիռ . — Այդ ի՞նչ խոժոս դէմք է ժիւլ :

Ժիւլ . — Կը հարցնե՞ս :

Քիռ . — Բայց չէ՞ մի որ քեզ հետ հաշտուեցինք :

Ժիւլ . — Ո՞վ է հաշտուել : Ես քեզ հետ չեմ հաշտուիր :

Քիռ . — Ի՞նչպէս թէ ով է հաշտուել : Դեռ քիչ առաջ չի հաշտուեցի՞նք քեզ հետ :

Ժիւլ . — Տիմար բաներ մի ըսեր : Ես քեզ չեմ տեսել :

Քիռ . — Իրաւ որ գուն խելքդ կորուսել ես, և կամ թէ մութ լինելուն չես նշմարել : Միթէ սրանից կէս ժամ առաջ քեզ հետ չի հաշտուեցի՞նք քու անկողնում

Ժիւլ . — Անէ՛ծք, ո՞վ երկինք, ես իմ ձեռքերովս քանդեցի իմ տան երջանկութիւնը : Վա՞յ ինձ :

Քիռ . — Կը տեսնեմ որ հանգստի պէտք ունիս ժիւլ :

Քիշեր բարի : Վազք առաւօտ կը տեսնուինք : (Կը մեկնի)

Ժիւլ . — Ի՞նչ ըրի Տէր Աստուած, ի՞նչ յիմարութիւն գործեց այս անբան անսունը : Ի՞նչ զժոխքի մէջ ձեզ զիս :

Էին. — Խո, խո :

Ժիւլ. — (Զարենելով) Դեռ կը խոմբացնե՞ս անձոռնի՛ :
Վեր կա՛ց, քեղի ապուշ, տիմար, խայտառակ :

Էին. — (Վեր ելելով) Հրամայեցէք կապիտան :

Ժիւլ. — Լաւ խոմբացրի՛ր, անառո՛ւն :

Էին. — Հիանաւի կապիտան, այնպէս որ ամէն մարդ զարմանում էր :

Ժիւլ. — Եթառկ ըսէ ապիրատ իմ գնալէս յետոյ, ո՞վ
եկաւ հոս :

Էին. — Ոչ ոք կապիտան :

Ժիւլ. — Ճիշտ ըսէ ստախօս, ապա թէ ոչ հիմա քեղ կը
խեղդեմ : (Կոկորդին կը բռնի)

Էին. — Թողէ՛ք ըսեմ կապիտան, ծառան եկաւ լիմոնատ
բերեց :

Ժիւլ. — Ուրի՛շ, ուրի՛շ :

Էին. — Ուրի՛շ, ուրի՛շ, ի՞նչ ուրիշ կապիտան :

Ժիւլ. — Ծո՛ւտ ըսէ, ուրիշ մարդ չեկա՞ւ :

Էին. — Ուրի՛շ, այս, չեկաւ, ոչ, եկաւ, կապիտան :

Ժիւլ. — Պիտի տօնս թէ ոչ, քեզ կ'սպաննեմ :

Էին. — Եկա՞ւ, եկա՞ւ, տիկինը եկաւ, բայց ես այնպէս
խոմբացնում էի կապիտան :

Ժիւլ. — Տիկինը եկաւ ի՞նչ ըրաւ, շուտ ասա, շուտ :

Էին. — Տիկինը եկաւ կապիտան, այսինքն առանձին
չեկաւ կապիտան :

Ժիւլ. — Հապա որո՞ւ հետ եկաւ ըսէ տեսնեմ :

Էին. — Տիկինը եկաւ կապիտան, ճրագին հետ եկաւ
կապիտան, մօտեցաւ կապիտան զիս շոյեց կապիտան, փայշ
փայշ կապիտան և վերջապէս (համբուրեց կապիտան) :

Ժիւլ. — Ի՞նչ, խայտառակ, ի՞նչպէս կը համարձակուեմ
ըսել : (Կուզէ ծեծել)

Էին. — Թողէք, թողէք, օգնութիւն, մեռա՛յ :

Ժիւլ. — (Թողլով) Շուտ ասա, յետոյ ի՞նչ եղաւ, շուտ :

Էին. — Յետոյ կապիտան, յետոյ ասաց որ վեր կաց եթէ
ոչ վարագոյրները կը ակի կը տամ ասաց կապիտան : Ես կա-
պիտան վախցայ կապիտան, վեր կացի կապիտան : Բայց ես
այնպէս խոմբացնում էի կապիտան :

Ժիւլ. — Գետինն անցնի խոմբացնելով, ուրիշ ինչ ասաց
պատճե՛ր, շուտ :

Էին. — Ուրիշ ասաց որ կապիտան, առանձին ոչինչ
չառաց կապիտան, Սակայն կապիտան, առաջ կարծեց որ ես
պարոնն եմ կապիտան : Եւ ասաց որ դուրս ելեմ կապի-
տան : Բայց ես այնպէս էի խոմբացնում որ չէի թողնում
նրան խօսել կապիտան :

Ժիւլ. — Յետոյ, յետոյ, ի՞նչ ասաց :

Էին. — Յետոյ, ասացի թէ ես բարո՞ղ չեմ, ասաց «ու-
րեմն դու ո՞վ ես», ասացի «ես ես եմ», ասաց «դու ո՞վ
ես», ասացի ես լինդորն եմ», ասաց «լինդորը ո՞վ է»,
ասացի «լինդորը կրդ գնդի զինուորն է», հենց որ իմացաւ
թէ զինուոր եմ, սկսեց աւելի մեզմ վարուել հետո :

Ժիւլ. — Դեռ կը համարձակուե՞ս խօսիլ վատ, ստորին,
դաւաճա՞ն, դու անձոռնի արարած (վզեն կը բռնի) :

Էին. — Օգնութիւն, սատանաներ, օգնութիւն, դժոխքն
ընկայ :

ՏԵՍՆԱԿ ԵՒ ՔԱՂ ԵՐ

Ն Ո Յ Ն Գ Ե Ւ Ք Ա Ղ Ե Ր

Քիոն. — (Մասկով) . — Կեցի՛ր, Ժիւլ, դուն իրաւունք
չունես պատճել այդ խեղճ զինուորը, որ պարզապէս քու-
քմահանոյքիդ խաղալիքն ես ըրեր :

Էին. — Այո՛, տիկին, այս :

Քիոն. — Հոս եթէ յանցաւոր մը կայ Ժիւլ, այն աւ
դուն ես, և առաջին անգամ դուն պէտք է պատժուիս : Տե՛ս
սա նամակը, տես և ամաչէ՛ զործած խայտառակութեանդ
համար :

Էին. — Ի սէր Աստուծոյ տիկին, զիս կ'սպաննէ :

Քիոն. — Մի վախնար լինդոր, դու չես պատճուիր :

Ժիւլ. — Այո՛, Քիոն, կ'ընդունիմ սխալս և արդէն զդիա-
ցած եմ : Ենթութիւն կը խնդրեմ :

Էին. — Կապիտան ներիր ի՞նձ մի բանտարկիր, մի սպան-

Նիր ինձ: Ես միշտ խռմբացրի, հարցրէք տիկնոջ, եթէ
կուզէք դարձեալ խռմբացնեմ:

Ժիւշ.— Լոիր Լինդոր, եթէ տիկինը ինձ ների, ես ալ
քեզ կը ներեմ, հասկացա՞ր:

Լին.— Տիկին ի սէր Աստուծոյ ներիր զայն և աղատիր
զիս կախաղանէն:

Քլեո.— Այո՛, ժիււ, կը ներեմ քեզ, բայց պէտք է խռս-
տանաս որ մէկ մ'ալ այդպիսի բան պէտք չէ պատահի:

Ժիւշ.— Այո՛, Քլեո, կը խռստանամ, ես գլուխս քարին
եմ զցել թէ որ մէկ մ'ալ այսպիսի արարքի մէջ գտնուիմ:

Լին.— Ես էլ գլուխս քարին եմ զցել որ մէկ մ'ալ ու-
րիշի տեղ չի խռմբացնեմ:

Ա Յ Ր Զ



2625
2626
2627
2628
2629
2630
2631



2013

